Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՑԱՎԱԿՑԱԿԱՆ ԳԻՐԸ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆԻ ՄԱՀՎԱՆ ԱՌԻԹՈՎ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից անվանի գեղանկարիչ Սարգիս Մուրադյանի մահվան առիթով ցավակցական գիր է ուղղել հանգուցյալի ընտանիքի անդամներին ու մերձավորներին, որում ասվում է. *«Ցավով տեղեկացանք մեր ժողովրդի տաղանդավոր զավակ Տիար Սարգիս Մուրադյանի մահվան մասին: Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Մեր անկեղծ ցավակցությունն ենք բերում հոգելույս հանգուցյալի ընտանիքի անդամներին, բոլոր հարազատներին, արվեստագետ ընկերներին ու մերձավորներին:*

Սարգիս Մուրադյանը իր բարձր արվեստով արժանի տեղ ունի հայ գեղանկարչության երախտավորների շարքում: Գեղարվեստի շնորհաշատ ու նվիրյալ մշակը իր բեղմնավոր կյանքի ընթացքում ստեղծեց ուրույն և մեծարժեք կտավներ, որոնք հարստացնում են հայ մշակույթի անդաստանը:

Ջերմ սիրով նա ծառայեց մեր Հայրենիքին ու ժողովրդին՝ իր նվիրումն ու անմնացորդ ջանքերը բերելով նաև Հայաստանի անկախության վերահաստատմանն ու մեր երկրի առջև ծառացած դժվարությունների հաղթահարմանը: Հայրենասեր հայորդին բարի հիշատակ է թողնում մեր ժողովրդի հոգում՝ ի Տեր ննջելով արժանավոր գործերով և ստեղծագործական արգասավոր վաստակով:

Մեր հոգեբուխ աղոթքն է, որ Բազումողորմ Աստված երկնային երանավետ բարձունքներում խաղաղության մեջ ընդունի Իր ծառայի՝ Սարգիս Մուրադյանի լույս հոգին՝ դասելով «ընդ սուրբս եւ ընդ սիրելիս անուան Իւրոյ»: Թող Տերը Սուրբ Հոգու շնորհով մխիթարություն ու սփոփանք պարգևի Մուրադյան ընտանիքի սգակիր անդամներին»:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ